

կը հնձուին . — կամ երբոր կը տեսնեմք մենք զմեզ որ ամենէն ետքինն մնացեր եմք մեր բարեկամաց մէջ, յետ տեսնաւ լու անոնց փափագներուն անյաջողութ մարիլը, և անոնց ետքի յոյսը յօշինչ դարձած, ո՞հ, ինչպէս ահաւոր տեսարան մը կ'ընծայեն բնութ և կեանք մեր մուացը: Երբոր չորս կողմերնիս կը նայիմք և կը տեսնանք հպարտուին, նախանձն և շարութիւնն՝ որ կը ջանան հասարակաց մարդկան վնաս հասցընել . — երբոր կը տեսնանք թէ որչափ առաքինութիւններ իրենց ծաղկին մէջ կը կտրէ, և ինչպէս վարպետութեամբ կը պատժէ այնպիսի առաքինութիւններ՝ զոր ստիպուած էր զովելու . — երբոր կը տեսնանք թէ ինչպէս դառնութեամբ կ'ար համարհուին զգացմունք և սովալլուկ կը թողուին հանձարք . և կը դիտեմք թէ ինչպէս կը զուարձանանան ոմանք տեսնալով իրենց ընկեր արարածներն ցաւոց մէջ . — երբոր զատնք կը տեսնեմք, անշուշտ բաւական իրաւունք կը գտնեմք:

խորին մելամաղձիկ տրտմութեան: Երբոր կանկ կ'առնումք մէկ մելամաղձիկ և մոտածոտ վարքի մը աւերակաց վրայ, որուն մէկ հատիկ օժիտն էր մը տաց անկախութին . — երբոր կը տեսնեմք որ մանկութեան գեղեցիկ ծաղիկը՝ տգեղութեամբ, վշտակրութեամբ և հասակով ցամքեր է . երբոր սրտի ելքատրական թելերը՝ անձնասեր անտարբերութեան մատներուն տակ կը պազին կը սառին . — և երբոր փորձն կը սովորեցնէ, թէ հարստութիւն, մեծութիւն և փառք՝ ծերոց գիմաց մէկ գրգռիչ մահուան սոսկումմը կը կանգնեն, փոխանակ նկարելու այն պայծառ կերպարանափոխաւթիւնը՝ որ իբրև մոգական դաւազանաւ մը ծերութեան խորշոմները կրնայ փոխել՝ ծաղկած դէմքի, որուն վրայ երևայ երկնային մանկութիւն մը, — ո՞հ, այն ատեն անշուշտ բաւական իրաւունք կայ խորին մելամաղձիկ տիսրութեան: — Աակայն այն մելամաղձին մէջ ալ կայ Յոյս .

ՊԵՔ ԵԱԳՂԱՑԻ.

ԲԱՆԱՍՏԵԴԱՌԻԹԻՒՆ

Ճանապարհ Երիտասարդի:

Երեք են՝ զորս անհնար է ինձ իմանալ, և զորրորդն ոչ ձանաշեմ.
Զհետս Աքծուոյ թռուցելոյ, և զջանապարհս Օձի ՚ի վերայ վիմի.
և զշւեիլու ՚աւեի ընդ ծով գնացելոյ . և զջանապարհս առն Երի.
տասարդի:

ԾՐԱԿԱ. ՍՈՂՈՄ.

Հողաթեան լայնասփիւռ խոյախաղաց եւ վըսեմ
Աաւառնացեալ սուրանայ վերանայ շեշտ արփածեմ,
Ա արազաջեղ կըուակտուց, լիամագիլ հուրաչեայ .
Յերկինս յեթերս յարձակի, թողու զոլորտս ՚ի բացեայ .
Աքհամարհեալ ըզլերամքք, դընէ եւ զամալըս նըկունս .
Պարտասին ացք հետազոտք ըզլացելոյն ՚ի բարձունս .
Եա թեւաբախ յառաջէ համառօտեալ ըզսահմանս .
Եւ ոչ բաւեն հետք՝ գըծիլ յարագարագըն խոյանս :
Աքծուի է սուր . ՚ի կարկառը լերանց բոյն իւր կանգաղ .
Ինքըն զերկնիւք քերելով, և հետքն անհուն եւ խաղաղ :

Օ արհուրագին է սարսուռ եւ սօսափիւնք մըկանանց .

Այսկավիթխար ու անարի յողն եւ 'ի պորտ ուժապանձ ,
Դալարագեղ եւ ճապուկ , օղ ընդ օղին քընթըռնեալ
Օ հասակին հարուստ կանգնաշար՝ կըռեալ ձուլէ 'ի մի քայլ .
Ճ ըշէ շըմէ եւ շարժի , տարեալ ըզտուտն առ զըլիսին
Եւ ըզգըլուխ բարձրածօձ պարսեալ ձըգէ բայսագին .
Փայլակնամեւ 'ի թըրթիռ ծամածըռեալ ըզվիմաւ ,
Կողէ 'ի կող ճապատի պատի զլերամիք և զանձաւ :
Ը է վիշապ , շանթելով սուզէ 'ի խորըս խաւար ,
Եւ 'ի սողան՝ ըսպառէ զըստուերական ճանապարհ :

Ի՞նդ համասփիւռ հոլանի տարածութիւնը նամէտ ,

Օ փածաւալ ձով անծայլ , որրան ծըփանց յարավիշտ ,
Ճ'եղբեալ ճողիկեալ ճօձ առեալ ըզմըկանամքք անփետուր
Խըլուուցեալ գայ լաստափայտ պաստառալիր կողամուր .
Օդապարիկ եւ լուզակ , մըրըրկաթեւ եւ հրաշունչ
Տոհորակեալ ընդ տարերս ամենիս խոր յարամուունչ .
Կառք եւ կամուրջ գընայուն , փըրփրայարոյց ասպատակ ,
Պատըրգամեալ զանդընդովք՝ յուսոյ տաճար անյատակ :
Վասէ , հնարից ու արգասեաց ըշտեմարան ակաղձուն .
Ա արգի յալիս բովանդակ , և շաւիղք ոչ են նորուն :

Մըրարձի զայս 'ի բարձունս , և խոնարհեալէր արծուին ,

Ի լայնալիճ աղեղանց՝ թափեալ թօթափք թըրչանին .
Ե կնակապիճք իւր շինեալք , և հողմը ըրձեալք ըզփետուրս :
Տեսի զվիշապըն վիժեալ 'ի սորամուտ ծակագուրս ,
Երբեւ կազնի ոստաքանց , եւ անրակք տուռըն տուռն անդ ,
Օդք եւ լեզուն եռասայր վիմատառեալք եւ կաշկանդ :
Ո՛չ , եւ զծովուն շահատակ տեսի զնաւ հուպ 'ի հանգիստ ,
Ե ենգեալ յալեաց եւ հողմոց կողքըն կուածոյք բարձրանիստ .
Խեւակապուտ եւ կարկամ 'ի խիթ ու 'ի խիճ խաղալիք ,
Վ ըրապարպատ եւ ջախջախ 'մերկ թափուր կայր բացալիք : . . .

Երիտասարդ քաջառոյդ գեղեցկագեղ եւ հուժկու ,

Հ անճարաշատ խորագէտ , ու առ ամենայն սիրարկու .
Որ բարձրագլուխ բարձրայօն եւ բարձրաքայլ ընթանաս ,
Բ ազդ 'ի բըռին , յոյս քո զքեւ , եւ շուրջ վայելք ձեռընհաս .
Յ անճնապաստան 'ի կորով մըտաց եւ յաջ եւ 'ի լանջ ,
Փառք եւ համբաւ , շահ 'եւ սէր՝ վարեն ըզսիրտդ աննահանջ .
Ե րհամարհես զառաջնովք վըստահ յեռանդն եւ յաւիւն ,
Ի նդ բարձր , ընդ խոր , եւ ընդ լայն անդունդս՝ հորդելնոր քեզ հուն .
Հ այեաց 'ի բարձր Մըծուին , յ(Օ ժ խոր , եւ 'ի լաւըդ հարուստ ,
Եւ ծանիր քեզ ճանապարհ : Ջիր ինչ անքոյթ ու անկորուստ :